ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«30» հունվարի 2018 թվականի № 09-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի թիվ ՆՀ-174-Ն հրամանագրի առաջին կետով հաստատված կարգի 136-րդ կետի 12-րդ ենթակետը, ՀՀ Նախագահի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ՆԿ-182-Ն կարգադրությունը ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի թիվ 836-Ն որոշման հավելվածի 1-ին կետը, ինչպես նաև էլեկտրատեղակայանքների, անավարտ և ժամանակավոր կառույցների, էներգետիկայի բնագավառի կարևորագույն այլ օբյեկտների անխափան աշխատանքն ու անվտանգ շահագործումն ապահովելու նպատակով,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ էլեկտրաներգետիկական համակարգի շահագործման հուսալիության և արդյունավետության ապահովման նպատակով ստեղծել տեխնիկական հանձնաժողով /այսուհետ՝ Հանձնաժողով/ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն Հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝ մինչև 2018թ. փետրվարի 28-ը ներկայացնել առաջարկություններ՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի շահագործման հուսալիության և արդյունավետության բարձրացմանն ուղղված տեխնիկական խնդիրների և միջոցառումների ցանկի վերաբերյալ:
3. Հանձնաժողովի նախագահին՝ յուրաքանչյուր կիսամսյակ, մինչև տվյալ կիսամսյակի վերջին ամսվա 20-ը ներկայացնել տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության ընթացիկ արդյունքների մասին:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների
և բնական պաշարների նախարարի
2018թ. հունվարի 30...-ի N 09.16 հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ.Ա. Հարությունյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ (նախագահ),
Կ.Բ. Սարգսյան	«Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ Հրազդան-5 հիմնարկի տնօրեն (քարտուղար), (համաձայնությամբ),
Հ. Բաղալյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության էներգետիկայի վարչության պետ
Ա.Գրիգորյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի էներգետիկայի պետական տեսչության վերլուծության, վիճակագրության և շահագործման համակարգման բաժնի պետ
Ռ. Եղոյան	ՀՀ էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Գ. Բալյան	«Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» (ԷԷՀՕ) ՓԲԸ գլխավոր ճարտարագետ
Լ. Ադամյան	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» («ԲԷՑ») ՓԲԸ տեխնիկական տնօրեն
Ա. Գևորգյան	«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ գլխավոր ճարտարագետ
Ա.Մնացականյան	«ՀրազՋԷԿ» ԲԲԸ գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),
Ա.Գրիգորյան	«Հայկական ատոմային էլեկտրակայան» (ՀԱԷԿ) ՓԲԸ գլխավոր ճարտարագետ,
Գ. Ղազարյան	«Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ, գլխավոր ճարտարագետ,
Հ. Սարգսյան	«Միջազգային էներգետիկ կորպորացիա» («ՄԷԿ») ՓԲԸ գլխավոր ճարտարագետ (համաձայնությամբ),
Ա. Յոլյան	«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ արտադրության գծով ղեկավար (համաձայնությամբ),
Դ.Գրիգորյան	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ»)ՓԲԸ տեխնիկական տնօրեն (համաձայնությամբ),
Գ. Մկրտչյան	«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի, էլեկտրամեխանիկական վերակառուցման ծրագրի ինժեներատեխնիկական գծով ղեկավար (համաձայնությամբ)